## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Շվեյցարիայի Համադաշնություն (ԺՆև) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**

Տաթևիկ Ստեփանյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

ԺՆև (Շվեյցարիայի Համադաշնություն), 2024 թվականի սեպտեմբերի 3-ից 6-ը

4. **Հրավիրող կողմը.**

ՄԱԿ-ի Մարդու իրավունքների բարձր հանձնակատար

5. **Գործուղման նպատակը.**

Մասնակցություն ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի իրականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական զեկույցի դիտարկմանը:

6. **Քննարկված թեմաները.**

ՀՀ պատվիրակությունը ղեկավարել եմ ես, անդամների կազմում ընդգրկված էին ներկայացուցիչներ նաև ՀՀ արտաքին գործերի, ՀՀ արդարադատության, ՀՀ առողջապահության, ՀՀ ներքին գործերի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից (հիմք՝ ՀՀ վարչապետի որոշում N 759/Ա): Զեկույցի դիտարկմանը մասնակցել է նաև Շվեյցարիայի Համադաշնության արտակարգ ու լիազոր դեսպան Անդրանիկ Հովհաննիսյանը:

Հաշվի առնելով, որ ՄԱԿ-ի Երեխաների իրավունքների մասին կոնվենցիայի իրականացման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 5-րդ և 6-րդ համատեղ պարբերական զեկույցն ընդգրկում է տեղեկատվություն երեխայի պաշտպանության ոլորտում 2013-2019 թվականներին տեղի ունեցած զարգացումների վերաբերյալ՝ ՀՀ պատվիրակության անդամներն անդրադարձան 2020 թվականից առ այսօր ոլորտում տեղի ունեցած բարեփոխումներին՝ միաժամանակ պատասխանելով Երեխաների իրավունքների կոմիտեի փորձագետների կողմից բարձրացրած հարցերին՝ ներկայացնելով վերաբերելի ոլորտներում երեխաների իրավունքների իրացման հետ կապված աշխատանքները (զեկույցի դիտարկման առցանց հղումները՝ https://webtv.un.org/en/asset/k1t/k1t43ty53m; https://webtv.un.org/en/asset/k1y/k1y6b56xfv):

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Նախքան պարբերական զեկույցի դիտարկումը՝ հանդես եմ եկել բացման խոսքով, որի ընթացքում ներկայացրել եմ Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերն՝ ուղղված ՄԱԿ-ի երեխաների իրավունքների մասին կոնվենցիայից բխող բոլոր հանձնառությունների կատարմանը, ինչպես նաև իրականացված և ընթացիկ բարեփոխումներն ու ծրագրերը, գործող օրենսդրությունն ու մշակվող փաստաթղթերը: Անդրադարձել եմ ապաինստիտուցիոնալացման գործընթացին, այս պահին պետության խնամքի տակ գտնվող երեխաներին տրամադրվող ծառայություններին, նրանց խնամքի և դաստիարակության կազմակերպմանը՝ նշելով, որ 2014 թվականից սկսած՝ ՀՀ կառավարության, միջազգային, տեղական, քաղաքացիական հասարակական կազմակերպությունների միջև շարունակական համագործակցության արդյունքում շուրջօրյա հաստատություններում խնամվող երեխաների թիվը գրեթե 5 անգամ կրճատվել է՝ 2014 թ. շուրջ 2000-ից նվազելով շուրջ 400-ի՝ 2023 թ. տարեվերջի դրությամբ:
Որպես պատվիրակության ղեկավար՝ իմ ելույթում համառոտ ներկայացրել եմ նաև մյուս գերատեսչությունների կողմից արձանագրված դրական փոփոխությունները: Անդրադառնալով առողջապահության ոլորտում վերջին տարիներին կատարված օրենսդրական փոփոխություններին՝ նշել եմ, որ դրանց արդյունքում մեծ առաջընթաց է արձանագրվել բուժօգնություն ստանալիս երեխայի ձայնը լսելի դարձնելու և նրա կարծիքը հաշվի առնելու հարցում: Ներկայացրել եմ նաև վերջին տարիներին մեռելածնության, մանկական և նորածնային մահացության նվազեցման միտումները և այն բարեփոխումները, որոնք բերել են ցանկալի արդյունքի՝ միաժամանակ ընդգծելով, որ նույնիսկ համավարակով և պատերազմով պայմանավորված՝ առողջապահական առաջնահերթությունների փոփոխության պայմաններում մոր և մանկան առողջության պահպանմանն ուղղված ֆինանսական հատկացումները ոչ միայն չեն նվազել, այլ նաև տարեցտարի աճել են: Նշել եմ, որ 2019 թվականից սկսած՝ Հայաստանի բոլոր երեխաների բուժօգնությունը, ներառյալ նորագույն և թանկարժեք տեխնոլոգիաներով իրականացվող բազմաթիվ միջամտությունները, անկախ նրանց տարիքից և սոցիալական կարգավիճակից, դարձել են անվճար:
Հատուկ շեշտադրմամբ խոսել եմ վերջին տարիներին կրթական համակարգի համապարփակ բարեփոխումների մասին՝ նշելով, որ 2022 թվականին հաստատվել է «ՀՀ կրթության՝ մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագիրը», որի նպատակն է ապահովել հավասար որակյալ ներառական կրթություն բոլորի համար՝ համաձայն Կայուն զարգացման 4-րդ նպատակի: Նշել եմ, որ 2019 թվականի համեմատ շուրջ 50%-ով աճել է կրթության ֆինանսավորումը, իսկ 2021 թվականին հաստատվել է Հանրակրթության նոր չափորոշիչը (curriculum), որի առանցքում ժողովրդավարական մշակույթի կոմպետենցիաներն են և ԲՏՃՄ (STEM) կրթությունը, և որի փուլային ներդրումը սկսվել է 2022 թվականից: Նշել եմ, որ վերանայվում են առարկայական ծրագրերն ու դասագրքերը, մեծ թափով իրականացվում են ուսուցիչների վերապատրաստումներ, դպրոցները վերազինվում են նոր լաբորատորիաներով, համակարգչային տեխնիկայով և գույքով՝ նշելով, որ ներդրման ավարտը նախատեսվում է 2026 թվականին: Ընդգծել եմ, որ ՀՀ կառավարությունն իր 2021-2026 թվականների ծրագրով պարտավորվել է մինչև 2026 թվականը կառուցել, հիմնանորոգել կամ վերանորոգել առնվազն 300 դպրոց, 500 մանկապարտեզ: Նշել եմ, որ արդեն 28 դպրոց հանձնվել է շահագործման, ևս 110-ում աշխատանքներն ընթացքի մեջ են,

որից 24-ը կավարտվի այս տարի, և որ բոլոր դպրոցները կառուցվում են համընդհանուր դիզայնի և բարձր սեյսմակայունության պահանջներին համապատասխան:
Համառոտ ներկայացրել եմ վերջին տարիներին Հայաստանի Հանրապետությունում արդարադատության ոլորտի օրենսդրական բարեփոխումները, որոնք միտված են եղել երեխայի լավագույն շահի առաջնայնության սկզբունքի ամրապնդմանը: Նշել եմ, որ մի շարք օրենքներում ամրագրվել է արդարադատության հետ առնչություն ունեցող երեխաների՝ իրենց տարիքային առանձնահատկությունների հաշվառմամբ լսված լինելու իրավունքի իրացման հնարավորությունը: Նշել եմ, որ քրեական արդարադատության բնագավառում օրենքով ամրագրվել է, որ պատժի ընդհանուր նպատակներից բացի՝ հանցանք կատարած անչափահասի նկատմամբ նշանակվող պատիժը նպատակ է հետապնդում ապահովելու նրա ֆիզիկական, հոգեկան, հոգևոր, բարոյական և սոցիալական բնականոն զարգացումը, դաստիարակելու նրան և պաշտպանելու այլ անձի բացասական ազդեցությունից: Նշել եմ, որ նոր քրեաիրավական կարգավորումներում, կրկին երեխաների իրավունքների և լավագույն շահի հաշվառմամբ, ամրագրվել է, որ անչափահաս մեղադրյալի նկատմամբ կալանքը, որպես խափանման միջոց, կիրառել թույլատրվում է միայն այն դեպքում, երբ նրան վերագրվում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր հանցանքների կատարում, իսկ ոչ մեծ ծանրության հանցագործության համար, ինչպես նաև առաջին անգամ հանցանք կատարելու դեպքում, որը միջին ծանրության հանցանք է, անչափահասի նկատմամբ ազատազրկում չի նշանակվում: Նշել եմ նաև, որ երեխայակենտրոն արդարադատության համակարգի ձևավորման գործընթացում կարևոր քայլ է որակավորված հոգեբանի ինստիտուտի ստեղծումը, ինչպես նաև «Բարնահուս» մոդելի ներդրումը և այս ծառայության ընդլայնման ուղղությամբ տարվող շարունակական աշխատանքը: Ընդգծել եմ, որ համաձայն այս տարվա հուլիսից ուժ մեջ մտած նոր «Ընտանեկան և կենցաղային բռնության կանխարգելման ու ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձանց պաշտպանության մասին» ՀՀ օրենքի՝ ընտանեկան և կենցաղային բռնության ենթարկված անձ է համարվում նաև ընտանիքի ներսում բռնությանը ականատես երեխան:
Զեկույցի դիտարկման ընթացքում համապատասխան ոլորտների ներկայացուցիչները հարց ու պատասխանի ձևաչափով անդրադարձան երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում ապաինստիտուցիոնալացման շրջանակներում իրականացված աշխատանքներին, դրան զուգահեռ ձեռնարկված միջոցառումներին՝ ուղղված այլընտրանքային խնամքի զարգացմանը, սոցիալական ապահովության, բնակարանային ապահովման ոլորտում իրականացվող մեծածավալ ծրագրերին, վերջին տարիներին ապահովված տրանսֆերտների աճին, աշխատանքային օրենսգրքում երեխայի աշխատանքին վերաբերող փոփոխված դրույթներին, սոցիալական աջակցությանը և ներդրվող նոր համակարգին:
Առանձին դրույթներով տարբեր գերատեսչությունների կողմից հանգամանալից ներկայացվեցին նաև Հայաստանի Հանրապետության կողմից իրականացվող միջոլորտային ծրագրերն ու միջոցառումները՝ ուղղված Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված երեխաների բոլոր իրավունքների ապահովմանը:
Բացման և եզրափակիչ ելույթներս ներկայացնում եմ կից:

**8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**

Քննարկման ընթացքում որոշումներ չեն ընդունվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

Վերահաստատել եմ Հայաստանի Հանրապետության հանձնառությունը՝ ստեղծել երեխաների համար բարենպաստ միջավայր և ապահովել բոլոր երեխաների բարեկեցությունը՝ համաձայն Երեխայի իրավունքների մասին ՄԱԿ-ի կոնվենցիայի սկզբունքների:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**

ՄԱԿ-ի փորձագետների կողմից տեղում հնչել է առաջարկ Հայաստանի Հանրապետություն ժամանելու և տեղում երեխաների իրավունքների իրացման համատեքստում հանդիպումներ և քննարկումներ իրականացնելու վերաբերյալ:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

9/6/2024

X

ՏԱԹԵՎԻԿ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Signed by: STEPANYAN TATEVIK 6205820293

Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 326-Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ***ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն***

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ***ՀՀ վարչապետի 21.08.2024թ. N 759-Ա որոշում***

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)
***ՀՀ ԱՍՀ նախարարի տեղակալ՝ Տաթևիկ Ստեփանյան, նախարարության արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ՝ Մերի Գասպարյան***

4. Գործուղման վայրը-***Շվեյցարիա՝ Ժնև***

5. Գործուղման ժամկետները ***03.09.2024թ-06.09.2024թ.***

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

**2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը**
**(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)**
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

- *ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը*
- բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

| Ծախսի տեսակը | | ***<u>Թաթևիկ Ստեփանյան</u>*** | ***<u>Գասպարյան Մերի</u>*** | ***<u>Ընդամենը (հազ. դրամ)</u>*** |
|---|---|---|---|---|
| Ճանապար-հածախս | Ավիածառայության տեսակը **<u>(էկոնոմ դաս,</u>** բիզնես դաս) | 404,686 | 482,440 | **<u>887,126</u>** |
| | Ավիատոմսի և ավիատոմսի ամրագրման արժեքը (դրամ) | 20,234 | 24,122 | **<u>44,356</u>** |
| Գիշերա-վարձի կանխավճարի հաշվարկ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | ***<u>197</u>*** | ***<u>197</u>*** | - |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 45,840.32 | 45,840.32 | - |
| | Օրերի քանակը | 2 | 3 | - |
| | Ընդամենը վճարվել է (դրամ) | ***<u>91,681</u>*** | ***<u>137,521</u>*** | ***<u>229,202</u>*** |
| Գիշերա-վարձի լրացուցիչ հաշվարկ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | ***<u>197</u>*** | ***<u>197</u>*** | - |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 30,507.42 | 30,507.42 | - |
| | Օրերի քանակը | **<u>2</u>** | **<u>3</u>** | |
| | **Ընդամենը հաշվարկվել է (դրամ)** | ***<u>61,015</u>*** | ***<u>91,522</u>*** | ***<u>152,537</u>*** |
| Օրապահիկ | Վճարը 1 օրվա համար (դոլար) | 155 | 155 | - |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 60,112 | 60,112 | - |
| | Օրերի քանակը | 3 | 4 | - |
| | Ընդամենը վճարվել է (դրամ) | ***<u>180,336</u>*** | ***<u>240,448</u>*** | ***<u>420,784</u>*** |
| Այլ ծախսեր | Հակահամաճարակային Նմուշառումների վճար | - | | - |
| | Մուտքի արտոնագրի վճար | - | | - |
| | Այլ ծախսեր Ավստրիայի դեսպանատուն դիմելու սպասարկման վճար | - | | - |
| | Ռուգոսստրախ Արմենիա ապահովագրության վճար | - | | - |
| **Ընդամենը ծախսեր** (հազ. դրամ) | | | | **<u>1,734,005</u>** |

***<u>*օրապահիկի և գիշերավարձի կանխավճարի հաշվարկի համար հիմք է ընդունվել ՀՀ կենտրոնական բանկի «28» «օգոստոսի» 2024 թվականի 1 դոլարին համարժեք 387.82 ՀՀ դրամի չափը</u>***

***<u>*գիշերավարձի լրացուցիչ հաշվարկի համար հիմք է ընդունվել ՀՀ կենտրոնական բանկի «10» «սեպտեմբերի» 2024 թվականի 1 եվրոյին համարժեք 387.15 ՀՀ դրամի չափը</u>***

X ____________________

**ԳԼԽԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԻՍՏ** **Ս. ՄՈՒՐԱԴՅԱՆ**

# ԿԱՆԽԱՎՃԱՐ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N

ազմակերպություն — ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

աժին,պաշտոն — Մարդու իրավունքների և հումանիտար հարցերի վարչության պետ

նուն, ազգանուն — Կարինե Մուշյան

| Կանխավճարը ստացված է | | Գումար | Կատարած ծախսերի նպատակահարմարությունը հաստատում եմ | Հաշվետվությունը հաստատում եմ հետևյալ գումարով |
|---|---|---|---|---|
| փոխանց. | 29.08.2024 | 377999 | 09.09.24թ. | ութ հարյուր իննսունութ հազար վեց հարյուր իննսունմեկ |
| հր.2390-Ա | | | | |
| 21.08.2024թ. | | | | |
| | | | | Հաշվետվությունը ստուգվել է |
| | | | | Ամսաթիվ 09.09.24թ. |
| ավիատոմս | | 450615 | | |
| | | | Թղթակցող հաշիվ Դ-տ | Գումար |
| Գերածախս | | 70,077 | «200-4» «160» | |

| ա/թիվ | Ինչ նպատակի և որ փաստաթղթի հիման վրա է վճարվել | Գումարը |
|---|---|---|
| սեպտեմբերի 3-6 | Օրապահիկ 4 օր x 155 $ = 620 $ X 387.85 դրամ Ժնև | 240467 |
| | Գիշեր. 3 օր x 197 $ = 591 $ X փ./536.25$/ x 387.15 դրամ | 207609 |
| | ավիատոմս 450615 դրամ | 450615 |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| Ընդամենը | | 898,691 |

# ԿԱՆԽԱՎՃԱՐ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ N

ազմակերպություն: ՀՀ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Բաժին,պաշտոն: Մոնիտորինգային մարմինների հետ համագործակցության բաժնի վարիչի պ/կ

նուն, ազգանուն: Սոֆյա Մարգարյան

| Կանխավճարը ստացված է | Գումար | Կատարած ծախսերի նպատակահարմարությունը հաստատում եմ | | Հաշվետվությունը հաստատում եմ հետևյալ գումարով |
|---|---|---|---|---|
| 1.փոխանց. 28.08.2024 | 272,038 | Ամսաթիվ | 09.09.24թ. | յոթ հարյուր քառասուն հազար հարյուր երեսունհինգ |
| 2.հրաման 2386-Ա 21.08.2024 | | | | |
| Ընդամենը ստացված է | | | | Հաշվետվությունը ստուգվել է |
| | | Հորված | | Ամսաթիվ 09.09.24թ. |
| ավիատոմս | 421379 | | | Գլխ.հաշվապահ |
| Մնացորդ | | Թղթակցող հաշիվ Դ-տ | Հիմնական հաշիվ Կ-տ | Գումար |
| Գերածախս | (46,718) | «200-4» | «160» | |

| ա/թիվ | Ինչ նպատակի և որ փաստաթղթի հիման վրա է վճարվել | Գումարը |
|---|---|---|
| սեպտեմբերի 3-5 | Օրապահիկ 3 օր x 155 $ = 465 $ X 387.85 դրամ ժնև | 180350 |
| | Օրապահիկ 2 օր x 197 $ = 394 $ X փ./357.50$/ x 387.15 դրամ | 138406 |
| | ավիատոմս 421379 դրամ | 421379 |
| | | |
| | | |
| | | |
| | | |
| Ընդամենը | | 740,135 |

Հավելված N 2
ՀՀ վարչապետի
N 326-Ն որոշման

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ ԿԳՄՍՆ

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՎՈ 759-Ա

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
նախարարի տեղակալ՝ Արթուր Մարտիրոսյան
(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը՝ Շվեյցարիայի Համադաշնություն (Ժնև)

5. Գործուղման ժամկետները՝ 2024թ. սեպտեմբերի 3-6-ը

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն
որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☑ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

| Ծախսի տեսակը | | Արթուր Մարտիրոսյան | | | Ընդամենը (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|---|
| Ճանապարհածախս | Ավիածառայության տեսակը | | | | |
| | Ավիատոմսի արժեքը (դրամ) | ***536045*** | | | ***536045*** |
| Գիշերավարձ | Վճարը 1 օրվա համար (դոլար) | 197 | | | 197 |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 76406 | | | 76406 |
| | Օրերի քանակը | 3 | | | 3 |
| | Ընդամենը (դրամ) | ***229219*** | | | ***229219*** |
| Օրապահիկ | Վճարը 1 օրվա համար (դոլար) | 155 | | | 155 |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 60117 | | | 60117 |
| | Օրերի քանակը | 4 | | | 4 |
| | Ընդամենը (դրամ) | ***240467*** | | | ***240467*** |
| Այլ ծախսեր | Հակահամաճարակային նմուշառումների | | | | |
| | Մուտքի արտոնագրի վճար | | | | |
| | Այլ ծախսեր (նկարագրել) | | | | |
| Ընդամենը ծախսեր (հազ. դրամ) | | ***1005.731*** | | | ***1005.731*** |

***Ծանոթություն:*** Նախնական վճարվել է 0 ՀՀ դրամ, ենթակա է վճարման 1005731 ՀՀ դրամ:

**ԿԳՄՍՆ գլխավոր քարտուղար՝** **ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ**

«Հավելված N 3

ՀՀ վարչապետի 2018 թ.
ապրիլի 19-ի N 1230-Ն
որոշման

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը — ՀՀ առողջապահության նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը — N 759-Ա 21.08.2024թ.
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) (*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*) — Նախարարի տեղակալ Արմեն Գասպարյան
4. Գործուղման վայրը — Շվեյցարիայի Համադաշնություն ք.Ժնև
5. Գործուղման ժամկետները — 2024թ.Սեպտեմբերի 3-ից-6-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*) — 

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը — Գիշերավարձ, օրապահիկ,ճանապարհածախս

(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

| Ծախսի տեսակը | | *Արմեն Գասպարյան* | *Անուն, ազգանուն 2* | **Ընդամենը** (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|
| Ճանապարհածախս | Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս) | էկոնոմ դաս | | |
| | Ավիատոմսի արժեքը (դրամ) | 507975.0 | | 508.0 |
| Գիշերավարձ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | USD 197 | | 0.0 |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 76457.7 | | |
| | Օրերի քանակը | 3 | | |
| | Ընդամենը (դրամ) | 60% 137623.80 | | 137.6 |
| Օրապահիկ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | USD 155 | | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 60157.1 | | 0.0 |
| | Օրերի քանակը | 4 | | |
| | Ընդամենը (դրամ) | 240628.2 | | 240.6 |
| Այլ ծախսեր | Հակահամաճարակային նմուշառումների վճար | | | |
| | Մուտքի արտոնագրի վճար | | | |
| | Այլ ծախսեր (նկարագրել) | | | |
| **Ընդամենը ծախսեր** (հազ. դրամ) | | 886227.0 | | 886.2 |

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը

(ստորագրություն) 26.08.2024թ.

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1239-Ն
որոշման

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը — ՀՀ առողջապահության նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը — N 759-Ա 21.08.2024թ.
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) (*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*) — Նախարարի տեղակալ Արմեն Գասպարյան
4. Գործուղման վայրը — Շվեյցարիայի Համադաշնություն ք.Ժնև
5. Գործուղման ժամկետները — 2024թ.Սեպտեմբերի 3-ից-6-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*) — ______

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*) — Գիշերավարձ, օրապահիկ,ճանապարհածախս

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

| Ծախսի տեսակը | | *Արմեն Գասպարյան* | *Անուն, ազգանուն 2* | **Ընդամենը** (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|
| Ճանապարհածախս | Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս) | էկոնոմ դաս | | |
| | Ավիատոմսի արժեքը (դրամ) | 0.0 | | 0.0 |
| Գիշերավարձ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | 0.0 | | 0.0 |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 0.0 | | |
| | Օրերի քանակը | 0 | | |
| | Ընդամենը (դրամ) | 40% -91707.84 | | 91.70 |
| Օրապահիկ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | | | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 0.0 | | 0.0 |
| | Օրերի քանակը | 0 | | 0 |
| | Ընդամենը (դրամ) | 0.0 | | 0.0 |
| Այլ ծախսեր | Հակահամաճարակային նմուշառումների վճար | | | |
| | Մուտքի արտոնագրի վճար | | | |
| | Այլ ծախսեր (նկարագրել) | | | |
| **Ընդամենը ծախսեր** (հազ. դրամ) | | 91707.84 | | 91.70 |

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը ______ (ստորագրություն) 09.09.2024թ.

# Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
# ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը <u>ՀՀ արդարադատության նախարարություն</u>
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ <u>Հայաստանի Հանրապետության վարչապետի 2024 թվականի օգոստոսի 21-ի թիվ 759-Ա որոշում</u>
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը <u>Լևոն Բալյան, ՀՀ արդարադատության նախարարի տեղակալ, Սյուզան Ղարդյան, ՀՀ արդարադատության նախարարության «Թարգմանությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր թարգմանիչ</u>
4. Գործուղման վայրը <u>Շվեյցարիայի Համադաշնություն (Ժնև)</u>
5. Գործուղման ժամկետները <u>2024 թվականի սեպտեմբերի 3-6-ը</u>
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ <u>ՀՀ պետական բյուջե</u>

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ <u>ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ</u> և այլ*

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)
(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

| Ծախսի տեսակը | | Լևոն Բալյան | Սյուզան Ղարդյան | **Ընդամենը** (հազ. դրամ) |
|---|---|---|---|---|
| Ճանապար-հածախս | Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս) | էկոնոմ դաս | էկոնոմ դաս | |
| | Ավիատոմսի արժեքը (դրամ) | 423,104 դրամ | 423,104 դրամ | 846,2 |
| Գիշերավարձ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | 197$ | 197$ | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 76,443.88 | 76,443.88 | |
| | Օրերի քանակը | 3 | 3 | |
| | Ընդամենը (դրամ) | կանխավճար (3*197$=591$*388.04դրամ | կանխավճար | 458,1 |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | =229,331 դրամ, որի 60%=137,599դրամ<br><br>տարբերություն (3*197$=591$*387.15դրամ =228,806 դրամ, որի 40%=91,522դրամ | (3*197$=591$*388.04դրամ =229,331 դրամ, որի 60%=137,599դրամ տարբերություն (3*197$=591$*387.15դրամ =228,806 դրամ, որի 40%=91,522դրամ | |
| Օրապահիկ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | 155$ | 155$ | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 60,146.20 | 60,146.20 | |
| | Օրերի քանակը | 4 | 4 | |
| | Ընդամենը (դրամ) | 240,584.80 | 240,584.80 | 481,2 |
| Այլ ծախսեր | Հակահամաճարակային նմուշառումների վճար | | | |
| | ՊՊՍ սրահում սպասարկում | | | |
| **Ընդամենը ծախսեր** (հազ. դրամ) | | 892,809.80 | 892,809.80 | 1,785.6 |

**ՀԱՐԳԱՆՔՈՎ,**

**ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝**

X ____________________

**ՏԻԳՐԱՆ ԱՐԵՅԱՆ**

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ ՆԳՆ
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՀՀ ՆԳ նախարարի 26.08.2024թ. Թիվ 4679-Ա հրաման
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
ՀՀ ՆԳՆ Իրավաբանական վարչության պետ Ռուսլան Մարանդյան
4. Գործուղման վայրը Շվեցարիայի Համադաշնություն ք. Ժնև
5. Գործուղման ժամկետը 03.09.2024թ-06.09.2024թ.
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսեր
*( ճանապարհածախս,օրապահիկ, գիշերավարձ, )*
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը

*(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի 2335-Ն որոշմանը համապատասխան)*

*(ընդգծել ծախսերի փոխհատուցվող տարբերակը)*

| | | |
|---|---|---|
| | ա. | փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը |
| | բ. | գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն 28.08.2024թ. |

| Ծախսի տեսակը | | Ռուսլան Մարանդյան | Ընդամենը (հազ. դրամ) |
|---|---|---|---|
| Ճանապար-հածախս | Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս) | եկենոմ դաս | |
| | Ավիատոմսի արժեքը (դրամ) | **507123** | **507.1** |
| Գիշերավարձ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | 197$ | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ). | 76418 | |
| | Օրերի քանակը | 3 | |
| | ընդամենը (դրամ) | **229254** | **229.3** |
| Օրապահիկ | Վճարը 1 օրվա համար (արտարժույթով) | 155$ | |
| | Վճարը 1 օրվա համար (դրամ) | 60126 | |
| | Օրերի քանակը | 4 | |
| | Ընդամենը (դրամ) | 240504 | 240.5 |
| Այլ ծախսեր | Հակահամաճարակային նմուշառումների վճար | | |
| | Մուտքի արտոնագրի վճար | | |
| | Այլ ծախսեր (ապահովագրություն) | | |
| Ընդամենը ծախսեր (հազ. դրամ) | | **976.9** | **976.9** |

ՀՀ ՆԳՆ